Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի «Արշալույսի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթներ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1. Հատուկ մանկավարժ՝ 1 դրույքային միավոր
2. Դաստիարակ՝ 1,17 դրույքային միավոր
3. Դաստիարակ /հերթապահ/՝ 0,59 դրույքային միավոր
4. Ֆիզկուլտուրայի հրահանգիչ՝ 0. 75 դրույքային միավոր

Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Հատուկ մանկավարժի որակավորման պահանջները՝ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:

Դաստիարակի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Դաստիարակի /հերթապահ/ որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Ֆիզկուլտուրայի հրահանգչի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ:

Դիմող քաղաքացիները «Արշալույսի մանկապարտեզ» ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. ապրիլի 18-ից մայիսի 19-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 17:00-ն:

Դաստիարակի, հերթապահ դաստիարակի թափուր պաշտոնների մրցույթը կկայանա 2026 թվականի մայիսի 26-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնում /հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0/:

Հատուկ մանկավարժի մրցույթը կկայանա 2026 թվականի մայիսի 26-ին, ժամը 12:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնում /հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0/:

Ֆիզկուլտուրայի հրահանգչի մրցույթը կկայանա 2026 թվականի մայիսի 26-ին, ժամը 14:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնում /հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0/:

Տեղեկությունների համար զանգահարել 055918863 հեռախոսահամարով:

Հասցե՝ գ. Արշալույս 19փ 23 շենք

Էլ. հասցե՝ arshaluysi.mankapartez@mail.ru